# Domestic Violence –

## Break the Cycle of Abuse



Los Angeles County
District Attorney's Office

Domestic violence is one of the most destructive crimes facing our society. The damaging effects of violence among spouses, family members and people in intimate relationships are profound.

Studies show that children raised in violent homes are more likely to become juvenile delinquents and adult criminals. They also are likely to repeat such acts as adults, a destructive pattern referred to as "the cycle of abuse."

This pamphlet serves to help victims find a safe way out of an abusive environment. Free help is available around the clock. The District Attorney's Office administers the 24-hour **Los Angeles County Domestic Violence Hotline, 1-800-978-3600**, an automated system which routes callers to live counselors at shelter locations throughout the county.

This pamphlet also lists the telephone numbers of many other agencies that assist victims, and additional information is available on our website at **http://da.lacounty.gov/familyviolence**.

As District Attorney, I am fully committed to prosecuting domestic violence crimes and breaking the cycle of abuse. The District Attorney's Office strives to protect victims and their children and hold abusers accountable.

*Steve Cooley*
*District Attorney*
*Los Angeles County*

## Los Angeles County Domestic Violence Hotline

1-800-978-3600

Help is available in 11 languages: English, Spanish, Korean, Vietnamese, Mandarin, Cantonese, Tagalog, Khmer, Japanese, Thai and Armenian.

Callers are routed to the appropriate shelter/counselor depending on the geographic location and language they select from the automated menu. Counseling, emergency shelter and referrals are available at no cost.

## What Happens When Abuse is Reported

When an act or threat of domestic violence occurs, victims or witnesses should immediately call 911 or their local police for assistance. Any evidence of the violence or threat should be kept for the police.

The police will investigate allegations of abuse, obtain medical aid for the victim, assist the victim in obtaining an Emergency Protective Order and help the victim and children leave with their personal belongings. The police also may arrest the abuser. The case then will be presented to the District Attorney's Office or local city attorney's office for prosecution.

The District Attorney's Office takes reports of domestic violence seriously. Deputy district attorneys in offices throughout the county have been specially trained to handle domestic violence cases. They will explain the criminal justice process to victims and encourage them to seek professional help in an effort to end the violence. The primary goal of the District Attorney's Office is to protect victims and their children whenever possible and to hold abusers accountable.

**District Attorney's Family Violence Division**
**213-974-3785**

## Victim Assistance

The District Attorney's Victim-Witness Assistance Program is available in courthouses and police stations throughout the county to assist crime victims who suffered injury or were threatened with injury. Victim services representatives provide assistance and resources to help keep victims and their children safe and counseling referrals to address the trauma of domestic violence.

In addition to helping victims obtain restitution, victim services representatives provide crisis-intervention services and necessary referrals to crime victims and their families; assist in requesting protective orders; guide crime victims through the court process; help arrange emergency shelter, food and clothing; and assist in filing for compensation through the California Victim Compensation Program.

Victims of violence or threats of violence with police reports on file may be eligible to receive compensation for qualifying losses and expenses related to the crime such as loss of wages and relocation, medical and counseling expenses. Staff members are available to assist victims in several languages.

**District Attorney's Victim-Witness Assistance Program**
**1-800-380-3811**

## Court Protective Orders

Courts may issue protective orders, also known as restraining orders, directing an abuser to stop harassing and to "keep away" from a victim and/or the victim's children. These orders do not guarantee the abuser will stop the abuse, but they do allow law enforcement to take action to remove the abuser. The types of protective orders include:

- **Emergency Protective Order (EPO)** – When the police are called to the scene of a domestic violence incident, they may call a judge on a 24-hour basis and obtain a temporary protective order for the victim by telephone.
- **Temporary Restraining Order (TRO) or Domestic Violence Restraining Order (DVRO)** – A victim may go on his/her own to a local courthouse and request a civil protective order at no cost. Many courts have staff members available to help with the filing process.

For help and instructions on obtaining a domestic violence restraining order, call the Los Angeles County Superior Court at 213-974-5587 or 213-974-5588.

- **Criminal Protective Order (CPO)** – When a criminal case is filed, the court may, on its own motion or at the prosecutor's request, issue appropriate protective orders. Criminal orders have priority over any conflicting civil and dependency court orders.
- **Out-of-State Domestic Violence Protective Order** – A victim entering California with a protective order issued by another state will be afforded protection here provided certain conditions are met. The victim must register the out-of-state order with the local superior court.

All domestic violence protective orders must be entered into the statewide California Restraining and Protective Order System (CARPOS). Law enforcement officers throughout the state may access the system to determine the existence of a protective order and enforce it. A restrained party can be arrested and criminally prosecuted for knowingly violating any domestic violence protective order.

DA-1572-B 2/10

## Where to Find Help

### Los Angeles County Domestic Violence Hotline

1-800-978-3600

**Other 24-hour hotlines:**
* Spanish speaker available at these sites

| | |
|---|---|
| 1736 Family Crisis Center, South Bay* | 310-370-5902 |
| Center for the Pacific Asian Family, L.A. (Asian languages available) | 1-800-339-3940 |
| Chicana Services Action Center/ Free Spirit, East Los Angeles* | 1-800-548-2722 |
| Domestic Violence Center* | 661-259-4357 |
| Glendale YWCA (Armenian/Spanish available) | 818-242-1106 |
| Haven Hills, San Fernando Valley* | 818-887-6589 |
| Haven House, Pasadena* | 323-681-2626 |
| House of Ruth, Pomona/Claremont* | 909-988-5559 |
| Jenesse Center, South L.A.* | 1-800-479-7328 |
| Rainbow Services, San Pedro* | 310-547-9343 |
| Sojourn, Santa Monica* | 310-264-6644 |
| Su Casa, Artesia* | 562-402-4888 |
| Tamar House Family Violence Project, San Fernando Valley (Farsi/ Hebrew/Russian/Spanish available) | 818-505-0900 |
| Valley Oasis, Antelope Valley* | 1-800-282-4808 |
| Women's & Children's Crisis Shelter, Whittier* | 562-945-3939 |
| WomenShelter of Long Beach* | 562-437-4663 |
| YWCA San Gabriel Valley* | 626-967-0658 |

For information on domestic violence issues and services, call the Los Angeles County Domestic Violence Council at 213-974-2799, Monday-Friday, 8 a.m. to 5 p.m., or visit **http://dvcouncil.lacounty.gov.**

**Visit our website at:**
**http://da.lacounty.gov**

# ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ.

## ԱԶԱՏՎԵՔ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԿԱՊԱՆՔՆԵՐԻՑ



Լոս Անջելես քաունթիի Գլխավոր դատախազություն

Ընտանեկան բռնությունը մեր հասարակությանը սպառնացող ամենավտանգավոր հանցագործություններից է: Բռնությունը լուրջ վնաս է հասցնում ամուսիններին, ընտանիքի անդամներին եւ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող անձանց: Ուսումնասիրությունները վկայում են, որ ընտանեկան բռնության պայմաններում մեծացած երեխայի՝ պատանի իրավախախտ եւ չափահաս հանցագործ դառնալու հավանականությունն ավելի մեծ է: Մեծ է նաեւ հավանականությունը, որ այդ վարքագիծը չափահաս տարիքում եւս կկրկնվի՝ առաջ բերելով «չարաշահման շղթա» կոչվող երեւույթը:

Այս ուղեցույցի նպատակն է՝ օգնել զոհերին գտնել չարաշահման միջավայրից դուրս գալու ապահով ճանապարհ: Դուք ունեք շուրջօրյա անվճար օգնության հնարավորություն: Այդ նպատակով, Գլխավոր դատախազությունն առանձնացրել է **Լոս Անջելես քաունթիի Ընտանեկան բռնության հարցերի շուրջօրյա ուղիղ հեռախոսագիծ, 1-800-978-3600՝** ավտոմատացված համակարգ, որի օգնությամբ զանգահարողն ուղղակի կապվում է քաունթիի համապատասխան ապաստարանային կենտրոնի խորհրդատուի հետ: Այս ուղեցույցում կարող եք գտնել նաեւ բռնության զոհերի օգնությամբ զբաղվող մի շարք այլ գործակալությունների հեռախոսահամարներ, իսկ հավելյալ տեղեկության համար կարող եք այցելել մեր կայքէջը՝ http://da.lacounty.gov/familyviolence:

Իրբեւ Գլխավոր դատախազ, ես լիովին հանձնառու եմ ընտանեկան բռնության հետ կապված հանցագործությունների հետապնդմանն ու «չարաշահման շղթայի» հաղթահարմանը: Գլխավոր դատախազի գրասենյակի խնդիրն է՝ պաշտպանել զոհերին ու նրանց երեխաներին, իսկ չարաշահողներին ենթարկել պատասխանատվության:

**Սթիվ Քուլի | Steve Cooley**
**Լոս Անջելես քաունթիի**
**Գլխավոր դատախազ**

## ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՈՒՆԹԻԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ ԳԻԾ

# 1-800-978-3600

Մենք օգնություն ենք տրամադրում 11 լեզվով. անգլերեն, իսպաներեն, կորեերեն, վիետնամերեն, մանդարին, կանտոներեն, տագալոգ, կխմերերեն, ճապոներեն, թայվաներեն եւ հայերեն:

Զանգերն ուղղվում են համապատասխան ապաստարան/խորհրդատուին՝ ըստ Ձեր աշխարհագրական վայրի ու լեզվի, որոնք ինքներդ եք ընտրում ավտոմատ մենյուի օգնությամբ:

Խորհրդատվությունը, շտապ ապաստարանի տրամադրումն ու հղումներն անվճար են:

## Ի՞ՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԴԵՊՔԸ ԶԵԿՈՒՑԵԼԻՍ

Ընտանեկան բռնության գործողության, կամ դրա սպառնալիքի դեպքում զոհը կամ վկան պետք է անհապաղ զանգահարեն 911 կամ մոտակա ոստիկանական բաժանմունք՝ օգնության նպատակով: Բռնությանը վերաբերող ցանկացած իրեղեն ապացույց պետք է պահպանվի ու հանձնվի ոստիկանություն:

Ոստիկանությունը կհետաքննի բռնության մեղադրանքները, կկարգավորի զոհին բժշկական օգնություն տրամադրելու խնդիրը, կօգնի զոհին ձեռք բերել Շտապ պաշտպանական հրաման, եւ զոհին ու երեխաներին կօգնի դուրս գալ տնից՝ անձնական իրերով: Ոստիկանությունը կարող է նաեւ ձերբակալել չարաշահողին: Այդուհետ, գործը կներկայացվի Գլխավոր դատախազություն, կամ տեղական դատախազության ամրմին՝ հետաքննության:

Գլխավոր դատախազությունը լրջորեն է վերաբերվում ընտանեկան բռնության դեպքերին: Քաունթիի դատախազության ողջ համակարգը համալրված է դատախազներով, որոնք ընտանեկան բռնության գործ վարելու հատուկ մասնագիտական վերապատրաստում են անցել: Նրանք կարող են զոհին բացատրել քրեական արդարադատության ընթացքը՝ քաջալերելով նրան, բռնությանը վերջ տալու նպատակով, դիմել մասնագիտական օգնության: Գլխավոր դատախազության նպատակն է՝ հնարավորինս օգնել զոհերին ու նրանց երեխաներին, իսկ չարաշահողներին ենթարկել պատասխանատվության:

**Գլխավոր դատախազության**
**Ընտանեկան բռնության հարցերի բաժին**
**213-974-3785**

## ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՈՒԺՈՂԻՆ

Գլխավոր դատախազության՝ Տուժողի եւ վկայի օժանդակության ծրագիրը, որն առաջարկվում է քաունթիի ողջ տարածքում տեղակայված դատարաններում ու ոստիկանական բաժանմունքներում, նպատակ ունի օգնել մարմնական վնասվածք ստացած, կամ դրա սպառնալիքին ենթարկված հանցագործության զոհերին:

Տուժողի օժանդակության ծառայության ներկայացուցիչները տուժողին ու նրա երեխաներին օգնություն եւ ռեսուրսներ են տրամադրում՝ թույլ տալով նրանց, ապահով տեղավորման ու խորհրդատվական ծառայությունների միջոցով, հաղթահարել ընտանեկան բռնության հետեւանքները:

Դրամական փոխհատուցում ստանալուց բացի, Տուժողի օժանդակության ծառայության ներկայացուցիչները տուժողին ու նրա ընտանիքին օգնում են նաեւ ստանալ ճգնաժամային միջամտության ծառայություններ եւ անհրաժեշտ այլ հղումներ; պաշտպանական հրամանի դիմում ներկայացնել; կողմնորոշվել դատավարության հետ կապված հարցերում՝ դրա ողջ ընթացքում; գտնել շտապ ապաստարան, սնունդ եւ հագուստ; եւ դիմել Կալիֆորնիայի Տուժողների փոխհատուցման ծրագրին՝ փոխհատուցման:

Բռնության կամ դրա սպառնալիքի զոհերը, որոնց գործին կից ոստիկանական զեկույց կա, կարող են իրավասություն ունենալ՝ ստանալու հանցագործության հետ կապված համապատասխան այնպիսի վնասների փոխհատուցում, ինչպիսիք են աշխատանքի կորուստը, բնակավայրի փոփոխությունը, ինչպես նաեւ բժշկական ու խորհրդատվական ծառայությունների ծախսերը: Ծրագրի աշխատակիցները պատրաստ են տուժողների հետ հաղորդակցվել մի շարք լեզուներով:

**Գլխավոր դատախազության**
**Տուժողի եւ վկայի օժանդակության ծրագիր**
**1-800-380-3811**

## ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ

Դատարանը կարող է պաշտպանական (զսպման) հրաման արձակել՝ բռնություն կատարողին կարգադրելով վերջ տալ զոհին եւ/կամ նրա երեխաներին նեղելուն, եւ «հեռու մնալ» նրանցից: Այդ հրամանը չի երաշխավորում, որ բռնություն կատարողը կդադարեցնի չարաշահումը, սակայն իրավապահ մարմիններին թույլ է տալիս հեռացնել այդ անձնավորությանը: Պաշտպանական հրամանի մի քանի տեսակ կա.

- **Շտապ պաշտպանական հրաման (EPO, Emergency Protective Order).** Ընտանեկան բռնության դեպքի վայր կանչվելուց հետո, ոստիկանությունը կարող է շուրջօրյա կարգով զանգահարել դատավորին եւ զոհի համար ստանալ ժամանակավոր պաշտպանական հրաման:
- **Ժամանակավոր զսպման հրաման (TRO, Temporary Protective Order) կամ Ընտանեկան բռնության զսպան հրաման (DVRO, Domestic Violence Restraining Order).** Զոհն ինքը կարող է դիմել տեղական դատարան, եւ ստանալ քաղաքացիական պաշտպանական հրաման՝ անվճար: Շատ դատարաններ հատուկ աշխատակիցներ ունեն, որոնք կօգնեն լրացնել դիմումը:

Ընտանեկան բռնության զսպման հրաման ստանալու օգնության եւ ցուցումների համար զանգահարեք Լոս Անջելես քաունթիի Գերագույն դատարան՝ 213-974-5587 կամ 213-974-5588:

- **Քրեական պաշտպանական հրաման (CPO, Criminal Protective Order).** Քրեական գործ հարուցելիս, դատարանը կարող է սեփական հայեցողությամբ կամ դատախազի խնդրանքով համապատասխան պաշտպանական հրամաններ արձակել: Քաղաքացիական եւ խնամատար դատական հրամանների հետ հակասության պարագայում քրեական հրամաններն ունեն առաջնահերթություն:
- **Ընտանեկան բռնության՝ մեկ այլ նահանգում տրված պաշտպանական հրաման.** Մեկ այլ նահանգից պաշտպանական հրաման ունեցող տուժողին Կալիֆորնիա մտնելիս կտրամադրվի պաշտպանություն՝ որոշ պայմանների բավարարման դեպքում: Տուժողը պետք է արտանահանգային հրամանը գրանցի տեղական գերագույն դատարանում:

Ընտանեկան Բռնության պաշտպանական բոլոր հրամանները պետք է գրանցվեն Կալիֆորնիայի Զսպման եւ պաշտպանական հրամանների նահանգային համակարգում (CARPOS, California Restraining and Protective Order System): Նահանգի իրավապահ մարմինների աշխատակիցներն ունեն այդ համակարգ մուտքի հնարավորություն՝ պաշտպանական հրամանի գոյությունը պարզելու, եւ գործադրումն ապահովելու նպատակով: Ընտանեկան բռնության պաշտպանական հրամանը գիտակցաբար խախտելու համար զսպման ենթարկված անձը կարող է ձերբակալվել ու ենթարկվել քրեական հետապնդման:

DA-1572 (ARM) 2/10

## ՈՐՏԵ՞Ղ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԳՏՆԵԼ

### ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՔԱՈՒՆԹԻԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԻՂ ԳԻԾ

# 1-800-978-3600

Շուրջօրյա այլ ուղիղ գծեր.

*Այս գծերը համալրված են իսպանախոս աշխատակիցներով

1736 Family Crisis Center, South Bay*
1736 Ընտանեկան ճգնաժամային կենտրոն,
Սաութ Բեյ* ........ 310-370-5902
Center for the Pacific Asian Family, L.A.
L.Ա. Ասիա-խաղաղօվկիանոսյան ընտանիքի կենտրոն
(խոսվում են ասիական լեզուներ) ........ 1-800-339-3940
Chicana Services Action Center/Free Spirit, East Los Angeles*
Չիկանա Սերվիսեզ գործողությունների կենտրոն /
Ֆրի Սփիրիթ*, Արեւելյան Լոս Անջելես ........ 1-800-548-2722
Domestic Violence Center*
Ընտանեկան բռնության հարցերի կենտրոն* ........ 661-259-4357
Glendale YWCA | Գլենդելի YWCA
(խոսվում են հայերեն, իսպաներեն) ........ 818-242-1106
Haven Hills, San Fernando Valley*
Հեւեն Հիլզ, Սան Ֆերնանդո հովիտ* ........ 818-887-6589
Haven House, Pasadena *
Հեւեն Հաուզ, Փասադենա* ........ 323-681-2626
House of Ruth, Pomona/Claremont*
Հաուզ օֆ Ռութ, Փոմոնա/Քլերմոնթ* ........ 909-988-5559
Jenesse Center, South L.A.*
Ջենես Սենթր, Հարավային Լոս Անջելես* ........ 1-800-479-7328
Rainbow Services, San Pedro*
Ռեյնբոու Սերվիսեզ, Սան Պեդրո* ........ 310-547-9343
Sojourn, Santa Monica*
Սոջորն, Սանտա Մոնիկա* ........ 310-264-6644
Su Casa, Artesia*
Սու Կասա, Արթեզիա* ........ 562-402-4888
Tamar House Family Violence Project, San Fernando Valley
Թամար Հաուզ Ընտանեկան բռնության հարցերով ծրագիր,
Սան Ֆերնանդո հովիտ (պարսկերեն/եբրայերեն/ռուսերեն/
իսպաներեն) ........ 818-505-0900
Valley Oasis, Antelope Valley*
Վելլի Օազիս, Անթելոփ հովիտ* ........ 1-800-282-4808
Women's & Children's Crisis Shelter, Whittier*
Կանանց եւ երեխաների ճգնաժամային
ապաստարան, Ուիթիեր* ........ 562-945-3939
WomenShelter of Long Beach*
Լոնգ Բիչի Ուիմինշելթեր* ........ 562-437-4663
YWCA San Gabriel Valley*
Սան Գաբրիել հովտի YWCA* ........ 626-967-0658

Ընտանեկան բռնության հարցերին վերաբերող տեղեկության եւ ծառայությունների համար զանգահարեք Լոս Անջելես քաունթիի Ընտանեկան բռնության հարցերի խորհուրդ՝ 213-974-2799, երկուշաբթի-ուրբաթ, 8:00-5:00-ը, կամ այցելեք http://dvcouncil.lacounty.gov

Այցելեք մեր կայքէջը՝
**http://da.lacounty.gov**